# Դաս 31. Մեծ Միեր

**Մկրտիչ Խերանյանի**
**«Սասնա տուն»**

**(հատված)**

*Միերի առաջին գործն եղավ վանք ու*
*դպրատուն շինել տալ, որպեսզի ժողովուրդը*
*ուսում առնի, և մտքի խավարը փարատվի:*
*Միերը Սասուն հրավիրեց ճարտարապետ,*
*հմուտ վարպետ Թևաթորոսին, որպեսզի վանք*
*շինել տա Մարութա սարում ու մեծ դպրատուն*
*մեսրոպյան տաճար:*
*Լսելով Միերի այդ որոշման մասին՝*
*վարպետ Թևաթորոսն ասաց.*

*– Պէտք են, պէտք, Միե՛ր, դպրատուն ու վանք,*
*Որ լույսով մնանք ...*
*Քանզի մտավոր խավարն ավելի*
*Վատ է, քան ամեն սոսխ բարբարոս.*
*Կկործի նավը ծովում անփարոս...*
*Տարին չանցած՝ Մարաթուկ լեռան ուսին*
*բարձրակառույց ու գեղեցիկ մի վանք*
*բարձրացավ և դպրատուն: Միերը մի խաչ տնկեց նրա*
*վեմ, երկինք հասնող գմբեթին ու նայելով*
*հասակն ի վեր երկնակարկառ այդ շենքին՝ Մարութա*
*Բարձր Աստվածածին դրեց անունը վանքի:*